

Ա Ռ Ա Ջ Ի Ն
Տ Ա Ր Ի

ՇԱԽԻՂ

Ա Ռ Ա Ջ Ի Ն
Տ Ա Ր Ի

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՐ-ԱԹԵՐԹ

„ՇԱԽԻՂ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱՐ ՍՐԵՐԸ

«ՇԱԽԻՂ» Տարեկան զինը 10 դրան, կէս տարեկանը 6 դրան: Առանձին «ՇԱԽԻՂ» խմբագրութիւնը քաղ է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ համարները 5 շաբաթ: Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 րուբլի, եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունում է տմեն կէս տարեկան 5 ֆր. կամ 2 րուբլի: Թէհրանում գրում են միմյայն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին խմբագրատան մէջ: Մեր հրատէս, Téhéran Rédaction CHAVIGH. 1 շաբաթ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրթական գործը Պարսկաստանի մէջ.— Ներքին ՏԵՍՆՈՒՄԻՆ. Նամակ Գալիթի.— Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՆՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ղարաղան զգաւոր:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՊԱՐՍԱԿԱՆՏԵՐԻ ՄԷՋ

I.
Հազիւ թէ գտնուի մի Հասարակութիւն քիչ թէ շատ զարգացած, որի մէջ կրթութեան գործը այնքան անկազմ է անկերպարան լինի, ինչպէս պարսկահայերի մէջ: Մենք կաշխատենք մի քանի յօդուածներով պարզել այդ վիճակը: Մանուկ սերնդին դադարեցնել պատրաստելու գործը, այնքան նուրբ է, այնքան կենսական, այնքան պատասխանատու, որ ամեն քաղաքակիրթ ընկերութեան առաջին հոգածութիւնն է կազմում, քիչ ամեն կառավարութիւն արգոսի աչքերով քննադատ է հետապնդում է մշտնջենարանական գործին, և հսկում է՝ պարտիզպանի նման, որ որոմներ չը խառնուին ցանկաւ սերմերի մէջ:

Այդ վերջին հսկողութեան պահանջը ամեն տեղ զգացուած է և ամեն քաղա-

քակիրթ երկիրներում կառավարութիւնները այդ պաշտօնը վերապահած են իւրեանց:

Ոչ մի տեղ դպրոցները ազատ կերպով թողուած չեն ամբոխի քմահաճութիւն, և ձեռնարկուների ազատ կամեցողութեան, և այդ, աշխարհի հասարակութեան մէջ, ուր արդէն կայ որոշ չափով հասկացողութիւն և գաղափարակցութիւն կրթական գործերի վերաբերմամբ:

Հայերը, այն երկիրներում ուր գրեւորութեան են, ներկայացուած լինելով յայտնաբերուած կառավարութեանց իւրեանց կղերականութեան ձեռքով, նմանապէս կրթութեան գործի մէջ ենթադրուած են եղել իւրեանց հոգեւոր իշխանութեան, պարսկահայերի մէջ առաւել ևս քան այլ երկիրներում:

Բայց դժբաղդաբար պարսկահայ հոգեւորականութիւնը շատ պաշտօնական կերպով է վարել, մինչև այս վերջին տարիները, իւր խնամքին յանձնուած և նոյն իսկ այսօր դեռ ոչ մի կանոնաւոր հսկողութիւն չը կայ:

Այդ հսկողութիւնը, լամենայն դէպս,

չէ անցել եպիսկոպոսանիստ քաղաքից աւելի հեռու և մինչև այսօր մենք թեմական տեսչի անունն անգամ չենք լսել: Նոյն իսկ աթուանիստ քաղաքի մէջ մինչև այժմ գոյութիւն չունին որոշ չափ և սահման, որով յայտնի լինէին հոգեւորականութեան և ժողովրդի փոխադարձ յարաբերութիւնները ուսումնարանական գործի մէջ: Մենք տեսել ենք տեղեր ուր տասնեակ տարիների ընթացքում հոգեւորականութիւնը աչք է կապել իւր աչքի առաջ կատարուած եղծումներին, ոչ հաշիւ է պահանջել, ոչ լեռաբերութեւ է մինչև անգամ իմանալ թէ ինչ են աւանդում դպրոցում, և որ առաւել է, թէ ինչպէս են աւանդում նոյն իսկ կրօնը: Մենք նմանապէս տեսել ենք տեղեր, ուր թեմական Առաջնորդը առանց սխառմաբանութեան, արտաքսել է այս ինչ ուսուցչին որ լանդգան է նորան ահաճելի լինել: Երկու կողմից մենք տեսել ենք եղծումներ, և տեսնում ենք այս օր: Այդ բոլորը ծագում է որոշ կանոնադրութեան պակասութիւնից:

Առաջին քայլը որ կարելի է անել մեր կրթութեան գործի բարեփոխման հա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳԻՐԴԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ (Ղարաղան Գաւառ)

Խնդիրն այն է որ այժմ Ղարաղանից հիմնուել են այն դժգոհաբար վերայ մի ով որ գայ իրենց մանուկները կրթելու, կամ բողոքականների կողմից է եկել եւ կամ եկել է մի «այն հանելու» իրանց գլխին. ուրիմն երեւակայեցէք թէ առաջուց ինչ խօսքեր ուղղուեցան ինձ մինչև իմ ընդունուելը, այն էլ ընդունելին երբ հազար ու մի տեսակ երգութիւնով յայտնեցին իրանց թէ որպիսի եղանակով գործելու ենք եկել: Այնուհետեւ սորանց միակ խօսքն այս է: «Եթէ դուք էլ միւսների նման զընար ևւ այստեղ չը մնար, մենք էլ եւս յաւիտեան ուսուցիչ անունով մարդ չենք ընդունել, եւ աւելի կրնորենք ուսումնարան չունենալ քան թէ այդ ծիւղով խաբուիլ»: Իսկ ոմանք որ փոքր ի շատեւ ուսման յարգն ու արժանիքը գիտեն, ասում են: Եթէ դուք էլ գնար, մենք երկարու ենք խնդրենք

բողոքականներից մի ուսուցիչ, որ միշտ մեզ մօտ մնայ, որովհետեւ, ասում է. երբ քաղաքում հարցնում ենք թէ այս ինչ պարտն որ վարժարանում է կրթուել կամ այն ինչի որդին որ տեղ է կրթուել, ասում են «պոտների մօտ», իսկ եթէ մի ժամանակ լսում են թէ այդ նոյն պոտների կողմից մեկը եկել է մեզ մօտ, երբ մեզ քաղաքում տեսնում են անմիջապէս ասում են զորան դուք արէք, մենք ձեզ համար մի ուսուցիչ կուղարկենք մենք որոնց խնդով չենք ընդունում բողոքականների ուսուցչին, եւ սպասում ենք ու սպասում, բայց մեզ համար օգնութիւն եւ վարժապետ չկայ. նորէն գնում ենք քաղաք, ազգում ենք հայր տէր Իսահակին, ուսուցատում են միւսներին, անօգուտ. եւրմն սորանից երեւում է որ մեր քաղաքացի եղբայրները միայն ունեն միշտ եւ շարունակ մեզ խաբելու, բայց մինչև երբ. մենք էլ չենք խաբուել: Կը բերենք բողոքականների ուսուցչին եւ թող նա մեզ ու մեր բոլոր երեխաներին պոռտացնի, էնքան լինի որ մի սեւ ու սպիտակ» ճանաչայնի մեր երեխաներին:

Ղարաղանիցների մեծամասնութիւնը այժմ սիրում է վարժարաններ տեսնել իրանց գիւղերում, մի մաս միւսին յօժար չին, որոնք խաւարաւորներն են եւ կծծիները: Երեխաների սովորած «անուն հորը եւ հայր մեր» եւ մի քանի երգեր եւ դասերը շուրջին շատ ծնողների աչքերը, այնպէս որ առաջուց չուզողներից շատերն այժմ փախաբում են, որովհետեւ տեղացի ծեր մարդկանցից շատերը հայր մերը անգամ չը գիտեն, իսկ երբ տեսնում են մի 8—15 տարեկան երեխայ քաղաքի լեզուով արտասանում է հայր մերը եւ մի քանի ազգային երգեր, նորա հիացած են մնում:

Պատմում են թէ մի ժամանակ երբ լուսահոգի Խաչատուր վարդապետը եկել էր այստեղ, հաւաքել էր տեղացի ծերերին եւ խօսակցութեան միջոցին լսել էր որ շատերը հայր մերը չը գիտեն. ճաշի սեղանի վերայ հրամայել էր թէ ով որ կարող է հայր մերն ասել թող ասէ, 10—15 ծերերից միայն հանգուցեալ քննադատ Պիղարը կարողացել էր ասել կատարելապէս, մնացածները կամ կիսատ գի-

Քիտիմուս նոր կրթաթղթների քաները եւ քաճառս, ներք, վերին Չամաչչին՝ ունի 3 կարգըւորներ, ներքին Չամաչչին եւ 3 կարգըւորներ, թոյլ Լուս չորսն ունի քաճեցե կրկաւոր շրկիկապոմներ՝ են եւ ունեն մի քանի կտոր գրքեր եւ քառուղի պնճիներ են ժողովրդի մօ: Դարս օտարաւանա հետ իրաւիկ մասեմ են շմ նր եւ զարապաներ: Երաւս թէ իրանց ոչ պիւզաշի չենն աչ եւզ ղոճոթոմանց: Այ եւ եղէ մի օտարաւան կամ օղոտչիկ կէտիւս եւ քանիսը հաւաքք թի քանի հարցեր են ուզղուս ինքաւ:

պաշտօնական փաստերից երևած է: որ Պարսկաստանի հետ ունեցած առևտրական շրջանառություն մէջ, որ մասնաւորապէս 55 միլիոն ռուբլու է հասնում, Առևտրատանը մէկ երեքիցն էլ պակաս մաս ունի. մնացածը պատկանում է համարեայ եւ բազմապէս Անգլիային եւ անգլո-հնդկական երկրներին: Պարսկաստանում եւ ասիական ուրիշ պետութիւններում միւր առևտրական շահերը պաշտպանելու համար խորհրդակցութիւնը հետեւեալ նիւթերն է նախապէս. 1) ռուս-պարսկական սահմանի բոլոր մասերի վրա տարածել այն վճիռները, որոնք վերաբերում էին Պարսկաստան ներմուծվող շաքարի ակցիզը եւ բամբակեղէն արդիւնքների մաքսահարկ վերադարձներուն. 2) լուսացնել ճանապարհները Պարսկաստանում ռուսաց սահմանից. 3) լուսացնել Էնդէլիան նաւահանգիստը. 4) տրտնաւթիւնների պայքարակրթական մաքսահարկեր վճարելու վերաբերմամբ Պարսկաստան ուղարկվող զանազան ծեռակերներին համար. 5) հաստատել Պարսկաստանում ռուս կրէդիտային բնկերութիւն. 6) աւելացնել ռուս հիւպատոսների թիւը Պարսկաստանում. 7) հաւասարաշափաւթիւն հաստատել, երբ Պարսկաստան մաքսային հարկեր է առնում ռուս եւ պարսկեր հպատակներից եւ վերացնել ռուս հպատակներից առնվող ռաւտարիան (հանձնարարագում) հարկը. 8) առևտրական շրջանառութիւնները զերացնելու համար օգտակար կը լինէր բարեւոյի դրամական գումարների փոխադրութեան եղանակը դէպի Անգլիոյական շրջանը եւ այդ կապակցում թանձր պետական բանկի մի բաժանմունք Ասիայացում, որը մասամբ կը չեղարացնէր Մէջի զարսկական պէրսիան բանկի գործակալութեան ֆառակար ազդեցութիւնը, այն բանիկ որ հիմնել են Լոնդոնում 1889 Քեմանգիական կապիտալիստները:

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ի Ն Ե Բ

Ի խաբոն, 26 ապրիլ: Խծելեան երեւոյցի է տեղս, օրը 200 մարդ վարակում են բայց մինչև հիմալ բիշ մարդիկ են մեռել այդ հիւանդութիւնից:

Ի ռնդոն, 26 ապրիլ: Երեկ երկրաշարժը կրկին տեղի ունեցաւ Յունաստանում: Վերջին լուրերն հաղորդում են որ դէպի Վաշինգտոն գնացող անգործների խումբը խաճակողական են լինում եւ կառավարութիւնը զօրք է դուրս ուղարկել նրանց ճանապարհը կտրելու համար:

Ի ռնդոն 28 ապրիլ: Յունաստանի Թիբս քաղաքը միանգամայն խորտակուեցաւ երկրաշարժից:

Ի ռնդոն, 1 մայիս: Ամերիկայից վերջին լուրերը հաղորդում են որ Կալիֆոնիա զրդուած անգործների ընթացքը դէպի Վաշինգտոն անկարգաւորում է. կառավարութիւնը շատ խռամբերի ճանապարհ կտրել է. Կալիֆոնիա 400 մարդիկ կէրգը (անգործներ) խաղաղ բանակում է Վաշինգտոնը: «Տոյմզի» փարիզական թղթակիցը հաղորդում է որ Ֆրանս Ժողէֆ կտրքն եւ Սուլթանն ընգտնում են միջնորդել Չարի մօտ, որ Ֆերդինանդին ընգտնի սրպէս Բուլղարիայի իշխան: Պամիրի վերաբերմամբ տեղի ունեցած բանակցութեան մէջ, Ռուսաց կառավարութիւնը մեծ գիջողութիւն է արել Չինաստանին եւ խոստացել է որ իւր զօրքը չը մօցնէ վիճելի հողի մէջ մինչև վերջնականապէս դաշնակցութիւն տեղի ունենայ երկու պետութեանց մէջ:

Արտօնատէր-Հրատարակիչ՝ Անդրեաս Բէկնադարեանց:

Յ Ա Յ Տ Ը Բ Ը Բ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ
Կ Ո Ր Ց Բ Ե Լ Ե Մ

Դավրեթի ք. վիճակախաղի տոմսերից 2 հատ
№ № 0265, եւ 0568:

Գտնողին կը վարձատրեն

Հասցէ՝ Բաշո Ալէքսանդր Յովսէփեանց

Դավրեթու հայոց կրթական «Սէր» ընկերութեան ներկայ 1894 թուականի անդամակցութեան բացուած լինելով վարչութիւնս դիմում է օտար քաղաքացի անդամներին, խնդրելով, որ շտապէն նորոգել իրանց անդամակցութիւնը եւ կանոնագրի փոփոխման ու նոր վարչութիւն ընտրելու մասին իրանց դիտողութիւնները ուղարկել գրութիւն կերպով ընկերութեան հասցէին: Անդամակցել ցանկացողները ձայն կ'ունենան Զատիկի լետոյ կայանալիք ընդհանուր ժողովում: Հայոց կրթական «Սէր» ընկերութեան վարչութիւն:

Շուտով կը կայանայ հայոց կրթական «ՍԵՐ» ընկերութեան ք. վիճակախաղի տ. խողր՝ Տոմսակները վաճառում են կենդրոնում այս հասցէով. Tauris (Perse) Comité d'Instruction arménienne «SER» Թէհրանում, պ. Հայրապետ տէր Յակոբեանի մօտ (Արամեան կանգոր): Իսկ Պարսկաստանի մէջ հայաբնակ քաղաքներում ընկերութեան գործակալների մօտ: Վարչութիւն հայոց կրթական «ՍԵՐ» ընկերութեան

Վ Ա Ճ Ա Ռ Ի Ո Ւ Մ Ե Ն

ԲԱՍՄԻ ԵՒ Ռ. ՊԱՅՅԱՆԵԱՆ ՊԱՄԱՌ-ԲԱՐԻՊԱ

ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Խրաքանչիւրի գինն է ճանապարհաժախաով
40 կ. գումարով ցանկացողներին գիշումն
կը լինի:

Тифлисъ, Саркис Согомонянцъ կամ Tiflis, Sarkis Sogomonyan

Ամեն տեսակ եւրոպական ճարեր կը գտնուին բծիչկ ԲԱՉԻԼԻ դեղատնումը Լալեգար փողոցում Թէհրանում, տասն քումանաչափ եւ աւելի գնողի համար, սովորական արժեքից գիշում կը լինի: Գիշեր ժամանակում եւս դեղատնումը բաց է:

ՇԱՐՈՒՆԵԿԻՈՒՄ Ի

„ԱՂԲԻԻՐԻ“ ՏԱՐԱՉԻ

ՆԵՐԿԱՅ ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՂԲԻԻՐԻ բաժանորդագինը առանց պրեմիաների 3ր:

ՏԱՐԱՉԻՆԸ 6 ք. հասցէն Tiflis. Réd. „Agbiour et Taraz“.

ՈՂ ԵՄԲԵՆՈՒՄ ՍՏԱՆԸՆՑ ՊԱՅՅԻՆ ԻՔՐԵՆ ՊՐԵՄԻԱ, ՊԵՏԷ Ե ՈՂԱՐԿԷ ԵՐՈՍ 5 ԲՈՒՔԼԻ: